Արձանագրություն N 3
Կենտրոն վարչական շրջանի համար մշակութային միջոցառումների կազմակերպման ծառայությունների ձեռքբերման «ԵՔ-ՀՄԱԾՁԲ-19/4» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան

18.03.2019թ.
Ժամը՝ 14:30

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Ս. Ներսիսյան /ԳԱՊ/
Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Մուրադյան /գնահատող/, Մ. Սարգսյան /գնահատող/
Մ. Մալխասյան /բացող/, Ե. Մաթևոսյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Համբարձումյան

1. Գների նվազեցման բանակցություններին անցակացման մասին

(Ս. Ներսիսյան)

Ընդունել ի գիտություն, որ համաձայն «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի՝ **«ԵՔ-ՀՄԱԾՁԲ-19/4»** ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում 1-ին և 2-րդ չափաբաժինների մասվ անցկացվող գնային առաջարկների նվազեցման բանակցություններին ծանուցված մասնակիցներից ներկայացել է միայն Մարինե Կույումջյան Միհրանի Ա/Ձ ներկայացուցիչը: Մասնակցի կողմից բանակցությունների համար սահմանված ժամկետում ներկայացվել է նոր գնային առաջարկներ, որը չի գերազանցել գնման առարկայի նախահաշվային արժեքը /Հավելված 1-ը կցվում է/:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

2. Ընթացակարգի 1-ին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների մասին

(Ս. Ներսիսյան)

2.1 Գնահատող հանձնաժողովի որոշմամբ ընթացակարգի 1-3-րդ չափաբաժինների մասով ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել Մարինե Կույումջյան Միհրանի Ա/Ձ-ն, որպես բավարար գնահատված նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից, 3-րդ չափաբաժնի մասով, 2-րդ տեղ զբաղեցնող՝ «Մինորա մշակութային կենտրոն» ՍՊԸ-ն:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

3. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու մասին

(Ս. Ներսիսյան)

Հիմք ընդունելով «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետը՝ գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ հարցում ներկայացնել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

4. Ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Ս. Ներսիսյան)

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից եզրակացության ստացման հաջորդ աշխատանքային օրը, բայց

ոչ ուշ քան 22.03.2019թ. ժամը 11:30-ին, Երևանի քաղաքապետարան, Արգիշտիի 1, 3-րդ հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Ս. Ներսիսյան

Անդամներ՝ _____ Ե. Մաթևոսյան

_____ Մ. Սարգսյան

_____ Ա. Մուրադյան

_____ Մ. Մալխասյան

Քարտուղար՝ _____ Ա. Համբարձումյան

Հավելված N 1.1
Կենտրոն վարչական շրջանի համար մշակութային միջոցառումների կազմակերպման ծառայությունների ձեռքբերման «ԵՔ-ՀՄԱԾՁԲ-19/4» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի բացման նիստի շարունակության թիվ 3 արձանագրության

ք. Երևան

18 մարտի 2019թ.
Ժամը 14:30

«Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ գնային առաջարկների նվազեցման նպատակով բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների հետ իրականացված բանակցությունների ընթացքում՝ Մարինե Կույումջյան Միիրանի Ա/Ձ -ի կողմից ներկայացվել են հետևյալ գնային առաջարկները.

Գնման առարկայի անվանումը	ԱՌԱՋԱՐԿՎԱԾ ՍԿԶԲՆԱԿԱՆ ԳԻՆ ՀՀ դրամ	ԱՌԱՋԱՐԿՎԱԾ ՆՎԱԶԵՑՎԱԾ ԳԻՆ ՀՀ դրամ	Ստորագրություն
Թատրոնի օրվան նվիրված միջոցառումների կազմակերպում	690000	460.000.	[signature]
Մանկական գրքի միջազգային օրվան նվիրված միջոցառումների կազմակերպում	790000	320.000	[signature]

Մարինե Կույումջյան Միիրանի Ա.Ձ.
Մասնակցի անվանումը (անունը) (ազգանունը, Անուն Հայրանունը)

(ստորագրությունը)